

և երազը հոն են, անոնց մէջ կը մտնէ, կը մխրճի հեղի-  
նակը, կամ աւելի ճիշտ, ազնի ունկնդիրներ, իր մէջն են.  
հարուստ, անօրինակ ժառանգութեամբ մը տիրացած է  
անոնց, ու արտաքին ամէն տեսիլ կուգայ այս մեծատա-  
ղանդ, հանճարեղ հոգւոյն մէջ արթնացնել բազմազան ե-  
րեսակներն ու թաքուն ակերը իր կարելիութեանց: Ըստ իս  
հանճարին բացատրութիւնն է այս:

Եթէ տարփական է Վարուժան, հոյակապօրէն հայրա-  
գորով ալ է, կարդացէք *Ողջոյն քեզ Մարիամը*<sup>23</sup> ու լսեցէք  
նաեւ զգացման սա քնքոյշ արտայայտութիւնը՝ *Վարուժա-  
կիս* մէջ՝

*Աղու՛ր, աղու՛ր, աղու՛ր վարդն եմ Գարունիս  
Որ սրբոտիս վրայ բացուեցար  
Եւ քեզի հետ բացիր հոգիս վըշտահեղձ  
Նոր երագի մը պայծառ:*

Նոյն քերթուածին մէջ՝

*Քու ձեռքըդ լոկ դեռ կը բրնձէ զիս կանգուն  
Աւազներուն վրայ փառքիս.  
Եւ մազիդ մէկ թելը բաւ է կապելու  
Տիեզերքին հետ՝ հոգիս:*

Կամ՝

*Զի ես անդո՛նդն եմ՝ որ կը ըլլայ երջանիկ  
Փոստուայի մը լոյսով.  
Անապատն եմ, որ երկինքին կը ժըպտի  
Իր ծըլարձակ մէ՛կ բոյսով:*

Տառապանքը՝ մանաւանդ ուրիշներունը, որոնք անխղ-  
ճօրէն կը շահագործուին, իր սրտին մէջ կարեկցութեան  
քանի՛ բովեր կը բանայ. կարդացէք *Առկայծ ճրագը*, *Բա-  
նուորուհին*, *Ընկեցիկը*, *Մեռնող բանտորը*, *Խաբուած կոյ-  
սերը*, *Մեքենաները*, *Ճիւղը կանցնին* ևն: Ահա նմոյշ մը  
*Բանուորուհի*էն